ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

14 մարտի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

36
(2702)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է

Սերժ Սարգսյանի մարտի 7-ի վերջին հարցազրույցից հետո «Հայկական ժամանակ»-ը հրապարակեց ծավալուն հոդված՝ փորձելով հերքել վերջինիս հայտարարությունները:

Բոլորին է հայտնի, որ «Հայկական ժամանակ» օրաթերթը պատկանում է Նիկոլ Փաշինյանի ընտանիքին: Հետաքրքիր է, որ հոդվածում խոսվում է (եւ, առհասարակ, Նիկոլ Փաշինյանը եւս խոսում է) Սերժ Սարգսյանի կողմից ձախողված բանակցային գործընթացի մասին այն դեպքում, երբ 2020 թվականին Կապանում Փաշինյանը հունվարյան ասուլիսում հայտարարեց, թե ցանկացած պահի կարող են վերադառնալ այդ ժառանգությանը, այն է՝ Արցախի միջանկյալ կարգավիճակ, Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի միջազգային երաշխիքներ, Քելբաջարի եւ Լաչինի հայապատկանություն եւ այլն, եւ այլն: Արցախի մասին վարչապետի իրարամերժ եւ չիրականացված խոստումները բազմաթիվ են: 2016-ի սեպտեմբերի 10-ին նա հայտարարում էր. «Քանի դեռ պաշտոնական Բաքուն հայտարարում է, թե Ստեփանակերտի վրա ադրբեջանական դրոշ պետք է ծածանվի, հայկական քաղաքական բառապաշարից փոխզիջում բառը պետք է արմատախիլ անել»: Այս հայտարարությունից հետո՝ 2022-ի ապրիլի 13-ին, ԱԺ ամբիոնից Փաշինյանը հայտարարում է ոչ միայն փոխզիջումների, այլեւ Արցախյան հարցի նշաձողն իջեցնելու մասին: Այժմ այդպիսի հայտարարությունները կրկին առկա են:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ-ն այսօր երեկոյան՝ Նիկոլ Փաշինյանի ասուլիսից հետո, վարչության նիստ է հրավիրելու: Նիստին մասնակցելու է նաեւ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Մեր տեղեկություններով՝ ՔՊ-ականները քննարկելու են Հայաստանի ու Արցախի շուրջ ստեղծված իրավիճակը: Բանն այն է, որ ՔՊ-ականներն իրենք էլ զգում են, որ մեր վիճակը, հատկապես՝ Արցախի հարցում, մեղմ ասած, հուսադրող չէ, իսկ Ադրբեջանի հետ բանակցությունները գնալով փակուղի են մտնում, արտաքին ֆրոնտում մարտահրավերները շատանում են: Հենց այս իրավիճակից ելնելով՝ ՔՊ-ականները որոշել են առավել հաճախ հանդիպել Փաշինյանի հետ, որպեսզի անձամբ նրանից տեղեկական զարգացումների մասին: Մեր տեղեկություններով՝ վարչության նիստում կքննարկվի նաեւ պատգամավոր, ՔՊ վարչության անդամ Արսեն Թորոսյանի շուրջ ստեղծված իրավիճակը: Բանն այն է, որ ՔՊ-ականներին այս օրերին չի հաջողվում ԱԺ-ում «բռնացնել» Արսեն Թորոսյանին, նրանք կարդում են Թորոսյանի գրառումները, ուստի հույս ունեն, որ Թորոսյանը կգա վարչության նիստին եւ պարզբանումներ կտա, թե ինչպես է ստացվել, որ իր պաշտոնավարման ժամանակ կորոնավիրուսի դեմ պայքարի անվան տակ մեծ թվով գումարներ են մսխվել պետբյուջեից:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր, ՀՀ առողջապահության նախկին նախարար Արսեն Թորոսյանն իր գործունեության շուրջ իրավապահների ակտիվ քննչական գործողությունների հրապարակային դրսեւորումներից հետո դիմել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին եւ հանդիպում խնդրել, սակայն մերժում է ստացել, ասել է թե՝ Նիկոլ Փաշինյանը նրան չի ընդունել: ՔՊ մեր աղբյուրների փոխանցմամբ՝ քաղաքական իշխանության մոտ առողջապահության նախկին նախարար, ԱԺ պատգամավոր Արսեն Թորոսյանին փորձում է փրկել ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը: Մյուս թիմակիցները, այդ թվում՝ Արսեն Թորոսյանի ընկեր, ՇՄ նախարար Հակոբ Սիմիդյանը, լուռ հետեւում են Թորոսյանի շուրջ կատարվող զարգացումներին: Ինչպես հայտնի է, մարտի 12-ին ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն հայտնեց, որ Երեւանի փոխքաղաքապետ Գեւորգ Սիմոնյանը, «Մեդլայն կլինիկ» ՍՊ ընկերության հիմնադիր տնօրեն Բաբկեն Շահումյանը կալանավորվել են, քանի որ պատշաճ չեն կատարել ծառայողական պարտականությունները, որի հետեւանքով էական վնաս է պատճառվել պետության օրինական շահերին: Տնային կալանքի տակ է ԱՆ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՓԲ ընկերության դեղակայուն բաժանմունքի վարիչ Լուսինե Եղիազարյանը եւ եւս 8 անձ, որոնք «Մեդլայն» բժշկական կենտրոնի աշխատակիցներ են եւ ունեն մեղադրյալի կարգավիճակ, սակայն առայժմ ազատության մեջ են: Վերջիններս եւս մեղադրվում են այն բանի համար, որ կորոնավիրուսային հիվանդության համար պետության կողմից հատկացված ծրագրի շրջանակներում պատշաճ չեն կատարել իրենց պրտականությունները, ինչի արդյունքում խարդախությամբ հափշտակվել է մոտ 120 միլիոն դրամ: Ամենագլխավոր հարցը մնում է մեկը՝ ե՞րբ է նախաքննական մարմինը հասնելու նախկին նախարար Արսեն Թորոսյանին. ի վերջո, նախարարի հրամանն են կատարել աշխատակիցները: Բացի այդ, նկատենք, որ Հակակոռուպցիոն կոմիտեի տարածած հաղորդագրությամբ՝ փոխնախարար Գեւորգ Սիմոնյանին մեղսագրվող արարքները կատարվել են ավելի շատ Անահիտ Ավանեսյանի պաշտոնավարման շրջանում (մոտ 11 ամիս), քան Արսեն Թորոսյանի դեպքում (7 ամիս:) Տեղեկացնենք, որ նախաքննական մարմինն Արսեն Թորոսյանին մեղադրանք առաջադրելու հարցում դեռ չի շտապում, քանի որ այլ ուշագրավ բացահայտումներ էլ են արվել նրա գործունեության մասով՝ այլ դրվագներով: Թե ինչ, կներկայացնենք ավելի ուշ:

ՀՀ Ազգային ժողովի «Քաղաքացիական խմբակցության» պատգամավոր Սիսակ Գաբրիելյանի ներկայացրած «Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը ենթարկվել է փորձաքննության, եւ բացթողումներ են հայտնաբերվել: Այս նախագծերում փոփոխությամբ պատգամավորն առաջարկում էր ամրագրել, որ որպես լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներ են նախատեսվում պայթուցիկ նյութերի եւ պայթեցման սարքավորումների արտադրությունը, ներմուծմամբ զբաղվելու գործունեությունը, առեւտուրը, պահեստավորման, կիրառման եւ պայթեցման աշխատանքների կատարումը: Առաջարկում է ամրագրել, որ «Լիցենզավորման մասին» օրենքով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու համար պետք է գանձվի պետական տուրք, սակայն «Պետական տուրքի մասին» օրենքով համապատասխան լիցենզիա տրամադրելու համար պետական տուրք նախատեսված չէ: Ստացվում է՝ անհամապատասխանություններ կան պատգամավորի նախագծում. նա առաջարկում է մի փոփոխություն անել օրենքում, որը հակասում է մյուս օրենքին: Միեւնույն ժամանակ իրավական փորձաքննության արդյունքներում նշվում է, թե հրագործական ապրանքների արտադրությունը, ներմուծումը նախատեսված է ոչ թե որպես ծանուցման ենթակա գործունեություն, այլ լիցենզավորման ենթակա գործունեություն: Արդյունքում անհասկանալի է՝ ինչպես հրագործական ապրանքների արտադրության, ներմուծման կամ առեւտրի իրականացման ծանուցում ներկայացրած անձը նախագիծն ուժի մեջ մտնելուց հետո պետք է համարվի նույն տեսակի գործունեության իրականացման ծանուցում ներկայացրած անձ, եթե նախագծով համապատասխան գործունեությունը նախատեսվում է սահմանել լիցենզավորման ենթակա: Այլ թերություններ եւս մասնագետները գտել են Գաբրիելյանի նախագծում:

ՃԻՇՏ ՈՐՈՇՈՒՄ

ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ ՉԵՄ ՏԵՍՆՈՒՄ

Հայաստանի արտգործնախարարությունը մարտի 10-ին հայտարարեց, որ Հայաստանը հրաժարվել է ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի տեղակալի իր քվոտայից: Տեղեկությունը լրատվամիջոցներին հայտնել էր ԱԳ նախարարի մամուլի խոսնակ Վահան Հունանյանը: Արտգործնախարարությունից, սակայն, զերծ էին մնացել հավելյան մեկնաբանություն տալ քվոտայից հրաժարվելու դատճառների մասին: ՀԱՊԿ-ը փաստացի Ռուսաստանի կողմից ղեկավարվող ռազմական դաշինք է, որը ստեղծվել է 2002թ.-ին՝ Հայաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ռուսաստանի, Տաջիկստանի եւ Ուզբեկստանի՝ 1992-ի մայիսին ստորագրած Հավաքական անվտանգության մասին դայմանագրի հիման վրա:

«Ժողովուրդ» օրաթերթը Հայաստանի՝ ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի տեղակալի իր քվոտայից հրաժարվելու եւ դրա հնարավոր հետեւանքների վերաբերյալ զրուցել է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Վիգեն Խաչատրյանի հետ: Մեզ հետ զրույցում Վիգեն Խաչատրյանն ասաց, որ արտառոց ոչինչ չի տեսնում այստեղ:

-Պարոն Խաչատրյան, որպես իշխող ֆրակցիայի պատգամավոր, ինչպե՞ս կգնահատեք Հայաստանի այս քայլը: ըստ Ձեզ՝ ի՞նչ հետեւանքներ այն կունենա:

-Դրա հետ կապված մանրամասներին չեմ տիրապետում, բուն պատճառների մասին չգիտեմ՝ ինչու է նման որոշում կայացվել, մամուլից եմ տեղեկացել: Հավանաբար, այդպես ճիշտ են գտել Հայաստանի իշխանությունները, այդպես են որոշել: Ես այստեղ ողբերգություն չեմ տեսնում, նորմալ եմ վերաբերվում, արտառոց ոչինչ չկա, կարելի էր եւ հրաժարվել այս քվոտայից. առանձնապես մեծ խնդիր չեմ տեսնում:

-Ի՞նչ եք կարծում, Հայաստանի այս կտրուկ քայլը ինչպե՞ս կանդրադառնա հայ-ռուսական հարաբերությունների վրա:

-Կարծում եմ, ավելի լուրջ թեմաներ կան, որոնք կարող են նպաստել Հայաստանի ու Ռուսաստանի հարաբերությունների վրա, քան նման ֆորմալ դրսեւորումները: Ես սրա մեջ ընդամենը ֆորմալ բան եմ տեսնում, բովանդակային վեճ այստեղ չեմ տեսնում: Մենք, իհարկե, ՀԱՊԿ-ից ունենք սպասելիքներ, որոնք, ըստ մեր պայմանավորվածությունների, չեն արդարացվում: ՀԱՊԿ-ի պահվածքը անհասկանալի է, որ մինչեւ հիմա Հայաստանի տարածքները զավթելու առումով Ադրբեջանի ագրեսիային ՀԱՊԿ-ը քաղաքական գնահատական չի տալիս համառորեն: Մենք սպասում ենք, տեսնենք՝ որքան կձգվի այս պրոցեսը: Այս պայմաններում ՀԱՊԿ-ում ակտիվանալու իմաստ ես չեմ տեսնում:

-Խմբակցությունում նախապես սրա հետ կապված քննարկում եղե՞լ է, ի՞նչ դիրքորոշում ունեն պատգամավորները.

-Դա ֆրակցիայի հարց չէ, որ քննարկվի. նման հարցերը խորհրդարանի լիազորությունների մեջ չեն մտնում: ՀԱՊԿ-ի դեպքում, հնարավոր է, հետագայում քննարկվի, բայց մինչ այժմ նման քննարկում չի եղել: Կարծում եմ՝ կարիք էլ չկա, որ լինի: Մեծ հաշվով, գտնում եմ, որ ճիշտ որոշում են կայացրել:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿՔՆՆԱՐԿԵՆ ՄԱՐՏԻ 20-Ի ՆԻՍՏԻՆ

ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը մարտի 20-ի նիստին կքննարկի Սահմանադրական դատարանի դատավոր Սեդա Սաֆարյանի լիազորությունները դադարեցնելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին «Հայաստան» խմբակցության միջնորդությունը:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ հանձնաժողովում այն ներկայացնելու է «Հայաստան» խմբակցության քարտուղար Արծվիկ Մինասյանը:

ArmLur.am-ը ավելի վաղ հայտնել էր, որ «Հայաստան» խմբակցությունը մարտի 3-ին շրջանառության մեջ էր դրել Սահմանադրական դատարանի դատավոր Սեդա Սաֆարյանի լիազորությունները դադարեցնելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին նախագիծը:

Հիմնավորման մեջ նշվում է, որ դիմումում ներկայացված փաստերի վերլուծությունը ողջամիտ ենթադրություն է ձեւավորում, որ Սահմանադրական դատարանի դատավոր Սեդա Սաֆարյանը խախտել է Սահմանադրական դատարանի դատավորի համար սահմանված անհամատեղելիության պահանջները, որի պայմաններում Ազգային ժողովը լիազորված է դիմելու Սահմանադրական դատարանին՝ անհամատեղելիության պահանջը խախտած դատավորի լիազորությունների դադարեցման վերաբերյալ դիմումով: Որպես Սաֆարյանի լիազորությունները դադարեցնելու հիմք՝ նշվում է, որ նա ձեռնարկատիրությամբ է զբաղվել, ինչն օրենքով անհամատեղելի է դատավորի կարգավիճակի հետ:

Գլխադասային հանձնաժողովում դրական եզրակացություն ստանալու դեպքում նախագիծը կմտնի ԱԺ լիագումար նիստերի օրակարգ:

«ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքի համաձայն՝ խորհրդարանում համապատասխան նախագիծը կարող է ընդունվել պատգամավորների ձայների 3/5-ով: Ստացվում է՝ որպեսզի ԱԺ-ն կարողանա դատավորի լիազորությունները դադարեցնելու հարցով դիմել ՍԴ, անհրաժեշտ է լինելու 65 պատգամավորի համաձայնությունը: Ընդդիմադիր երկու խմբակցությունները միասին ունեն 35 ձայն:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ ՓԱԿԵԼ ԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ քաղաքական իշխանություններն առայժմ ՊԵԿ նախագահ Ռուստամ Բադասյանի հեռացման հարցը փակել են, սակայն պարզվում է՝ բավականին խիստ խոսակցություն է եղել ՊԵԿ նախագահի հետ: Իսկ ի՞նչն է եղել Բադասյանի վրա խիստ զայրանալու եւ, ըստ էության, նրան զգուշացնելու պատճառը: Այս տարվա հունվարի 25-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը բացահայտել էր ՀՀ ՊԵԿ պաշտոնատար անձանց կողմից կաշառք-գումարներ ստանալու բազմաթիվ դեպքեր: Մասնավորապես, ՊԵԿ պաշտոնատար անձինք որոշ տնտեսվարողների կողմից իրականացվող չարաշահումների դեմ քայլեր չեն ձեռնարկել եւ 2022 թվականի նոյեմբերից մինչեւ 2023 թվականի հունվարի 11-ն ընկած ժամանակահատվածում նրանցից պահանջել ու ՀՀ դրամով կամ արտարժույթով ստացել են տարբեր չափերով, այդ թվում՝ խոշոր չափերով կաշառք-գումարներ: Նախաքննության ընթացքում հանցանքների կատարումը վկայող փաստերի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով հանրային քրեական հետապնդում է հարուցվել 15 անձի նկատմամբ, որոնցից 12-ի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանքը: Այս կոռուպցիոն սխեմայի բացահայտումն էլ Բադասյանի հետագա պաշտոնավարման հարցն է առաջ բերել, սակայն դատելով իրավիճակից՝ նրան ժամանակ է տրվել, որպեսզի շտկի իրավիճակը, եւ առայժմ նրա հեռացման հարցը փակվել էլ, քանի որ նաեւ զեկուցվել է, որ Բադասյանն անձամբ առնչություն չի ունեցել կոռուպցիոն այդ սխեմայի հետ: Ի դեպ, երեկ Բադասյանն անձամբ անդրադարձել էր իր ազատման լուրերին եւ ասել. «Չէ, ես ոչ մի տեղ չեմ հեռանում: Որտեղի՞ց այդ տեղեկությունը»: Նա նշել է, որ նոր պաշտոնի առաջարկ չի ստացել, աշխատանքից հեռանալու դիմում էլ չի գրել:

ԲՆԱԿՈՒԹՅՈՒՆ՝ ՆԱԽԿԻՆ ՕԳՆԱԿԱՆԻ ՏԱՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Ռուբեն Վարդանյանն Արցախում բնակվում է իր նախկին օգնական Արմեն Հակոբջանյանի տանը, որի հետ հասցրել է մտերմանալ: Տեղեկությունը փորձեցինք ճշտել Արմեն Հակոբջանյանից, որը չհաստատեց, բայց ոչ էլ հերքեց տեղեկությունը՝ հորդորելով Ռուբեն Վարդանյանի հետ կապված հարցերով դիմել անձամբ Վարդանյանին: Երբ ասացինք, որ հարցը նաեւ իրեն է առնչվում, քանի որ, ըստ մեր տեղեկությունների, Վարդանյանը հենց իր տանն է մնում, Հակոբջանյանը կրկին չցանկացավ մեկնաբանություն տալ: Ռուբեն Վարդանյանն իր պաշտոնանկությունից հետո հայտարարել էր, որ չի հեռանալու Արցախից եւ այնտեղ է իր գործունեությունը շարունակելու: Վերջինս Արցախ էր եկել հենց նախագահ Արայիկ Հարությունյանի հրավերով եւ նրա առաջարկով էլ ստանձնել էր պետնախարարի պաշտոնը: Ավելին՝ մինչ պաշտոն ստանձնելը Ռուբեն Վարդանյանը բնակվել է «Պարկ հոթել» հյուրանոցում, մինչեւ հասցրեց մտերմանալ Արցախի գրեթե բոլոր պետական մրցույթների հաղթող, «կոռուպցիայի հետ սերտ հարաբերություններ ունեցող» Արման Հակոբջանյանի հետ եւ հիմա Ստեփանակերտի նրա տանն է ապրում: Հիշեցնենք, որ Վարդանյանը, Արայիկ Հարությունյանի որոշմամբ, 6 ամիս պաշտոնավարելուց հետո ազատվեց պետնախարարի պաշտոնից:

ՆՈՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարությունը հանդես է եկել օրենսդրական նախաձեռնությամբ եւ ներկայացրել է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրի նախագիծը: ArmLur.am-ը տեղեկացավ, որ այն ներառում է առաջիկա 3 տարիների ընթացքում մարդու իրավունքների ոլորտում բարեփոխումներին ուղղված միջոցառումները:

Նախագծի մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության սոցիալ-իրավական կյանքում տեղի ունեցած շրջադարձային փոփոխություններով, այդ թվում՝ միջազգային պարտավորություններից բխող հրատապ միջոցների ձեռնարկման կարեւորությամբ եւ, ի վերջո, 2018թ. երկրում տեղի ունեցած թավշյա, ոչ բռնի, ժողովրդական հեղափոխության արդյունքում առաջ եկած առաջնահերթություններով:

Մարդու իրավունքների պաշտպանության նոր ռազմավարական փաստաթղթի ընդունումը նպատակաուղղված է լինելու Հայաստանի Հանրապետությունում առաջիկա 3 տարիների համար մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի քաղաքականության ձեւավորմանը, ինչպես նաեւ առաջիկա 3 տարիների համար ոլորտի միջոցառումները մեկ միասնական փաստաթղթով սահմանելուն:

Հիմնավորման մեջ նշվում է. մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025թթ. գործողությունների ծրագրի նպատակներն են՝

-մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությունը եւ երաշխավորումը,

-ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությանն ու երաշխավորմանն ուղղված պետական հետեւողական քաղաքականության իրականացումը,

-Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով երաշխավորված քաղաքացիական եւ քաղաքական, տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների պաշտպանության կառուցակարգերի բարելավումը՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխան՝ հաշվի առնելով մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների առաջարկությունները եւ հանձնարարականները,

-մարդու իրավունքների եւ դրանց պաշտպանության միջոցների մասին հանրային իրազեկվածության բարձրացումը՝ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, ինչպես նաեւ հասարակության եւ քաղաքացիների կողմից սեփական իրավունքների պաշտպանության խրախուսումը, մարդու իրավունքների եւ դրանց պաշտպանության միջոցների վերաբերյալ գիտելիքների տարածումը կրթական ծրագրերի իրականացման միջոցով,

-մարդու իրավունքների միասնական քաղաքականության ուղղությունների նախանշումը՝ հիմքեր ստեղծելով հետագա տարիներին իրականացվելիք գործողությունների համար:

ՊԱՏԱՍԽԱՆ Է ՍՏԱՑԵԼ

ՊԱՐԵԿՆԵՐԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՀԱՆԳԱՎՈՐՎԵԼ ԵՆ

Ամ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Վանաձոր քաղաքի բնակիչների նկատմամբ բռնություն գործադրած պարեկները նախապես հրահանգավորվել են...

Վանաձոր քաղաքի մի խումբ քաղաքացիների նկատմամբ Փաշինյանին ուղեկցող պարեկների կողմից բռնություն գործադրելու առթիվ պարզաբանումներ եմ ստացել ՀՀ ոստիկանությունից եւ դատախազությունից:

Իմ պահանջի հետքերով...

2022թ. նոյեմբերի 25-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին ուղեկցող ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության աշխատակիցների կողմից Վանաձոր քաղաքի մի խումբ քաղաքացիների նկատմամբ բռնություն գործադրելու մասին փաստեր հրապարակվեցին: Իմ շտապ հանձնարարականով հանձնաժողովի փորձագետները կապ հաստատեցին բոլոր կողմերի հետ՝ արձանագրելու իրողությունները:

Քաղաքացիներից մեկի խոսքերով՝ պարեկները մոտ 20 հոգով հարձակվել են անչափահասի վրա, արցունքաբեր գազ փչել աչքերին, ծեծել, ընդ որում՝ միջադեպի ընթացքում պարեկներին զգուշացվել է, որ տղան անչափահաս է. քաղաքացիներից մեկի գլուխն ասֆալտին են խփել, դաժանորեն ծեծել (դեպքի մասին պատմող տեսագրություններն առկա են):

Դեպքի առնչությամբ դեռեւս 2022թ. նոյեմբերի 28-ին համապատասխան հարցում էի կատարել ՀՀ ոստիկանություն եւ ստացել պարզաբանում առ այն, որ դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ եւ 7-րդ կետերով նախաձեռնվել է քրեական վարույթ, ու իրականացվում է նախաքննություն:

Իմ կոնկրետ հարցին, թե միջադեպի օրը ՀՀ վարչապետի այցով պայմանավորված կատարվել է արդյոք մարզային պարեկային ծառայողների լրացուցիչ հրահանգավորում, ստացել էի հավաստում, որ ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության Լոռու մարզի գումարտակի ծառայողները բարձրաստիճան պաշտոնյաների ուղեկցման կապակցությամբ իրականացվող ծառայությունից առաջ հրահանգավորվել են:

Չխախտելով անմեղության կանխավարկածը՝ այնուամենայնիվ պետք է արձանագրել, որ պարեկները ՀՀ քաղաքացիների նկատմամբ բռնություն են գործադրել վերադասից հրահանգավորվելուց հետո:

Ի պատասխան իմ լրացուցիչ հարցման՝ ՀՀ դատախազությունից ստացել էի պարզաբանում, ըստ որի՝ վերոնշյալ քրեական վարույթով նախաքննությունը շարունակվում է, եւ որեւէ անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդում չի հարուցվել:

Կարեւորելով միջազգայնորեն ընդունված այն մոտեցումը, որի համաձայն՝ «ուշացած արդարադատությունը հավասար է մերժված արդարադատության»՝ արձանագրեմ, որ առնվազն հրապարակայնորեն առկա են լայն տարածում ստացած տեսանյութեր, որտեղ դեպքի մասին հայտնած՝ ըստ էության տուժող հանդիսացող անձինք ունեն վնասվածքներ եւ հստակ հայտնում են իրենց ծեծի ենթարկելու մանրամասները:

Այս պայմաններում անհասկանալի է, թե ինչն է պատճառը, որ քրեական վարույթով չկան մեղադրյալներ:

Փաստ է այն, որ Նիկոլ Փաշինյանի հռչակած «ժողովրդավարության բաստիոն» Հայաստանում քաղաքացիներին ծեծի ենթարկած պարեկային աշխատակիցները մնում են անպատիժ: Սա՞ է բարեփոխված ոստիկանությունը»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑ Է ՈՒՆԵՑԵԼ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց է ունեցել Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի հետ:

Հեռախոսազրույցի ընթացքում քննարկվել է Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի ապօրինի շրջափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղում շարունակվող հումանիտար ճգնաժամը: Այս համատեքստում վարչապետ Փաշինյանն անդրադարձել է մարտի 5-ին Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղում իրականացված ահաբեկչական գործողությանը եւ դրա հետեւանքներին: Լեռնային Ղարաբաղում ճգնաժամի հաղթահարման համատեքստում ՀՀ վարչապետը կարեւորել է ՌԴ-ի կողմից հասցեական արձագանքը:

Մտքեր են փոխանակվել նաեւ Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորման գործընթացի շուրջ:

Քննարկվել են 2020 թվականի նոյեմբերի 9-ի, 2021 թվականի հունվարի 11-ի, նոյեմբերի 26-ի եւ 2022 թվականի հոկտեմբերի 31-ի՝ Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի առաջնորդների եռակողմ հայտարարությունների իրականացմանը վերաբերող հարցեր:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

Արցախի Հանրապետության պետական նախարար, քաղաքացիական պաշտպանության պետ Գուրգեն Ներսիսյանը մարտի 12-ին հրավիրել է խորհրդակցություն քաղպաշտպանության բոլոր ծառայությունների եւ շրջանների վարչակազմերի ղեկավարների մասնակցությամբ. այս մասին հայտնեցին Արցախի Հանրապետության պետական նախարարի աշխատակազմից:

Հանդիպման ընթացքում զեկուցվել է ապաստարանների վիճակի, ինչպես նաեւ քաղպաշտպանության պլանով նախատեսված միջոցառումների մասին: Պետական նախարարը նշել է, որ անհրաժեշտ է ամենասեղմ ժամկետում ներկայացնել կատարման ենթակա աշխատանքների ցանկը՝ համապետական միջոցառում պլանավորելու եւ պետական կառավարման համակարգում աշխատող անձանց ու քաղաքացիների ուժերի մեկտեղմամբ այդ աշխատանքները կատարելու համար:

Գուրգեն Ներսիսյանը համապատասխան հանձնարարականներ է տվել իրավիճակից բխող հրատապ խնդիրների լուծման ուղղությամբ:

ԿԺԱՄԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Մարտի 14-19-ը Հայաստանի Հանրապետություն կժամանի Իրաքի Ներկայացուցիչների պալատի պատգամավոր, Իրաք-Հայաստան բարեկամական խմբի ղեկավար Մոհամմեդ ԽՈՇՆԱՈՒԻ գլխավորած պատվիրակությունը:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Իրաքի պատվիրակությանը կդիմավորի պատգամավոր Ռուստամ Բաքոյանը:

Պատվիրակության ընդունելությունը կկազմակերպվի ՀՀ պետբյուջեով Ազգային ժողովին այդ նպատակի համար հատկացված միջոցների հաշվին:

ՈՎ Է ՍՊԱՆՎԱԾԸ

ՊԱՐԵԿԸ ՍՊԱՆԵԼ Է ՔԱՂԱՔԱՑՈՒՆ

Մարտի լույս 13-ի գիշերը ոստիկանության Կոտայքի մարզի օպերատիվ կառավարման կենտրոն է զանգել Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի մի բնակչուհի եւ գողության մասին հաղորդում տվել: Ահազանգով մեկնել են ոստիկանության Հրազդանի բաժնի օպերատիվ խումբը եւ դարեկային ծառայության Կոտայքի գումարտակի ծառայողները: Տղամարդը կացնով սպառնացել է ոստիկանության ծառայողներին:

Նրա հարձակումը կանխելու, ինչպես նաեւ իրենց կյանքին կամ առողջությանը սպառնացող վտանգը չեզոքացնելու համար կիրառվել է հրազեն: Տղամարդը տեղափոխվել է «Հրազդան» բժշկական կենտրոն: Հրազդանի 45-ամյա բնակիչը, որը նախկինում դատապարտվել էր, մահացել է: Կատարվում է նախաքննություն: Հանգամանքները պարզվում են: Ո՞վ է Սամվել Թովմասյանը, որը սպանվել է պարեկների կրակոցից: Վերջինս Հրազդան քաղաքի բնակիչ է եւ նախկինում եւս հայտնվել է իրավապահների տեսադաշտում:

Մասնավորապես, ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Սամվել Թովմասյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա 2019 թվականի հունիսի 1-ին Համլետ Նավասարդյանի հետ, գտնվելով Երեւան քաղաքի Տրգրան Մեծի փողոցի վրա գործող «Կամուրջ» հացատանը, ալկոհոլ է օգտագործել, որից հետո՝ ժամը 01:00-ի սահմաններում, դուրս գալով հացատնից, Տիգրան Մեծ փողոցի 46-րդ հասցեի դիմաց առաջացած կենցաղային հարցի շուրջ սկսել է վիճաբանել Համլետ Նավասարդյանի հետ, որի ընթացքում վերջիններս փոխադարձ սեռական բնույթի հայհոյանքներ են հնչեցրել եւ քաշքշել են իրար, ինչը նկատվել է ՀՀ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ՊՊԾ գնդի հերթապահություն իրականացնող աշխատակիցների կողմից, վերջիններս միջամտել են վիճաբանությանը եւ փորձել են Սամվել Թովմասյանին եւ Համլետ Նավասարդյանին բերման ենթարկել, սակայն Թովմասյանը մոտ 20 որպե փողոցում հավաքված տասնյակ քաղաքացիների ներկայությամբ անհասցե սեռական բնույթի հայհոյանքներ է հնչեցրել՝ դիտավորությամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսեւորելով ՀՀ ոստիկանության աշխատակիցների եւ քաղաքացիների նկատմամբ:

Սամվել Թովմասյանին մեղադրանք է առաջադրվել նաեւ այն բանի համար, որ նա, 2022 թվականի փետրվարի 7-ին գողություն կատարելու դիտավորությամբ նախնական համաձայնության գալով Հրազդան քաղաքի բնակիչ Գագիկ Քեշիշյանի հետ, ապօրինի մուտք են գործել «ՀրազՋԷկ» ԲԲԸ-ին պատկանող «Ռուսհայկական բարեկամության տուն» շինություն եւ այնտեղից գողացել պատուհանի թվով 6 հատ ալյումինե փեղկեր՝ պատճառելով գույքային վնաս: Այս արարքի համար դատարանը նրան մեղավոր է ճանաչել եւ նրա նկատմամբ պատիժ նշանակել ազատազրկումը՝ 2 (երկու) տարի ժամկետով, սակայն պատիժը պայմանականորեն չի կիրառվել՝ սահմանելով փորձաշրջան՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՓԱՍՏԵՐ

ՊԵՏՔ Է ՀԱՐՑԱՔՆՆՎԻ

Երեւանի փոխքաղաքապետ Գեւորգ Սիմոնյանին մեղսագրվող արարքի մասով պետք է անցնի նաեւ ՀՀ առողջապահության ներկայիս նախարար Անահիտ Ավանեսյանը: Ինչպես հայտնի է, Երեւանի փոխքաղաքապետ, առողջապահության նախկին փոխնախարար Գեւորգ Սիմոնյանը ձերբակալվել, ապա կալանավորվել է: Հակակոռուպցիոն կոմիտեն մանրամասներ էր ներկայացրել, թե ինչու է հանրային քրեական հետապնդում հարուցվել նրա նկատմամբ:

Մասնավորապես, Սիմոնյանը նշանակված է եղել որպես պատասխանատու կորոնավիրուսային հիվանդության համար անհրաժեշտ բժշկական օգնության եւ սպասարկման ծառայությունների՝ ներառյալ ֆինանսավորման համակարգի համար: Սակայն «Մեդլայն» կլինիկան՝ Բ. Ծ.-ի կազմակերպմամբ, բժշկական կազմակերպության բժիշկներից առնվազն 8-ը սոմատիկ բաժանմունքում 2020թ. հուլիսից 2021թ. դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում ստացիոնար բուժում ստացած 385 պացիենտի հիվանդության պատմագրերում կեղծ տեղեկություններ են ներառել, թե, իբր, հիշյալ պացիենտները բուժում են ստացել վերակենդանացման բաժանմունքում, որի վերաբերյալ այնուհետեւ կեղծ հաշվետվություններ են ներկայացրել ՀՀ առողջապահության նախարարություն, փաստացի չմատուցված ծառայությունների դիմաց փոխանցվել է առանձնապես խոշոր չափերի՝ 119.005.000 ՀՀ դրամ: Ինչպես նշված է հաղորդագրության մեջ, խոսքը 2020 թվականի հուլիսից մինչեւ 2021 թվականի դեկտեմբերն ընկած ժամանակահատվածի մասին է: Նկատենք՝ առողջապահության նախկին նախարար, ներկայումս «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Արսեն Թորոսյանն այլեւս նախարար չէ 2021 թվականի հունվարից: Նույն տարվա հունվարի 18-ից մինչեւ այժմ ՀՀ առողջապահության նախարարի պաշտոնը զբաղեցնում է Անահիտ Ավանեսյանը: Այսինքն՝ ստացվում է՝ Գեւորգ Սիմոնյանին եւ կլինիկայի ղեկավարությանը մեղսագրվող արարքները կատարվել են ավելի շատ Անահիտ Ավանեսյանի պաշտոնավարման շրջանում՝ մոտ 11 ամիս, իսկ Արսեն Թորոսյանի դեպքում՝ յոթ ամիս:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ նախաքննական մարմինը պատրաստվում է ծանուցում ուղարկել Արսեն Թորոսյանին, որպեսզի նա ներկայանա նախաքննական մարմին եւ հարցաքննվի որպես վկա: Վերը նշված փաստերը խոսում են այն մասին, որ նույն ծանուցումից պետք է ուղարկվի նաեւ Անահիտ Ավանեսյանին, քանի որ այդ արարքը կատարվել է նաեւ նրա պաշտոնավարման ժամանակ:

«Ժողովուրդ» օրաթերթը դիմեց ՀՀ առողջապահության նախարարի մամուլի քարտուղար Հռիփսիմե Խաչատրյանին՝ հասկանալու համար, թե ինչպես է Անահիտ Ավանեսյանը մեկնաբանում Գեւորգ Սիմոնյանի շուրջ ստեղծված իրավիճակը: Ի պատասխան՝ Հռիփսիմե Խաչատրյանը նշեց. «Նախաքննությամբ պայմանավորված՝ մեկնաբանությունը տեղին չէ, ինչ վերաբերում է հարցաքննության հրավիրելուն, ապա եթե կարիքը լինի, օրենքին համապատասխան քայլն էլ կհաջորդի»:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԿԱՆԽԵԼ Է ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ

ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության Սյունիքի տարածաշրջանային բաժնի աշխատակիցներն օպերատիվ տեղեկություններ էին ստացել, որ Մեղրիի մաքսային կետ-բաժնով Իրանի Իսլամական Հանրապետությունից ՀՀ ներմուծված ապրանքը հայտարարագրվել է ոչ իր անվամբ:

5 բեռնատար ավտոմեքենայով բերված՝ ընդհանուր շուրջ 122 հազար կգ քաշով ապրանքը հայտարարագրվել է որպես ավիավառելիք՝ ռեակտիվ շարժիչների համար:

Տեղեկատվության իսկությունը ստուգելու նպատակով վերոնշյալ ապրանքները բաց թողնվելուց հետո Մաքսանենգության դեմ պայքարի վարչության աշխատակիցների կողմից իրականացվել են հսկողական աշխատանքներ: Արդյունքում հիշյալ բեռնատարները կանգնեցվել են, եւ այդ տրանսպորտային միջոցներում առկա նյութերից վերցվել են փորձանմուշներ, եւ նյութերի իրական բաղադրակազմը պարզելու նպատակով նշանակվել է նյութագիտական փորձաքննություն:

Համաձայն փորձաքննության եզրակացության՝ հայտարարագրված ապրանքները չեն հանդիսացել ավիավառելիք՝ ռեակտիվ շարժիչների համար, այլ հանդիսացել են գազօյլ, ինչը՝ որպես հավելյալ բաղադրանյութ, օգտագործվում է դիզելային վառելիքի բաղադրության մեջ: Տնտեսավարող սուբյեկտը, ապրանքներն իրական անվանումներով չհայտարարագրելով, խուսափել է պետական բյուջե լրացուցիչ վճարման ենթակա մաքսային վճարումից:

Փաստի առթիվ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 316-րդ հոդվածի հատկանիշներով կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն: Դեպքին առնչվող նյութերը տրամադրվել են ՊԵԿ իրավաբանական վարչություն:

ԻՆՉ Է ԹԱՔՑՐԵԼ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Տիգրան Սանասարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով «ԻՄՊԵՐԻԱԼ ՊԱԼԱՍ ՀՈԹԵԼ» ՍՊ ընկերության տնօրենը, նույն ընկերության սեփականատեր Արմեն Վահանի Բաղդասարյանի կազմակերպմամբ եւ ղեկավարմամբ՝ «ԻՄՊԵՐԻԱԼ ՊԱԼԱՍ ՀՈԹԵԼ» ՍՊ ընկերության սնանկության ընթացքում կատարել է անօրինական գործողություններ՝ թաքցրել է գույքի, դրա չափի մասին տեղեկությունները, ինչպես նաեւ, «Սնանկության մասին» օրենքով սահմանված կարգով, չարամտորեն խուսափել է սնանկության կառավարչին հայտարարագիր ներկայացնելուց՝ պարտատիրոջը պատճառելով խոշոր չափի վնաս:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մարտի 10-ից 13-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 191 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՎԵՐՋՆԱԿԱՆԱՊԵՍ ԱՐԴԱՐԱՑՎԵՑԻՆ

Իջեւան քաղաքի բնակչուհի, 1964թ. ծնված Վանուհի Ասիլբեկյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, աշխատելով «Իջեւան բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում որպես մանկաբարձ-գինեկոլոգ եւ հանդիսանալով բժշկական օգնություն ու սպասարկում իրականացնող անձ, պարտավոր լինելով ապահովելու ցուցաբերվող բժշկական օգնության եւ սպասարկման քանակական ու որակական բնութագրիչների համապատասխանությունը սահմանված չափանիշներին, 2017թ. հուլիսի 14-ին Իջեւան քաղաքի բնակչուհի Էլինա Սաղոյանի ծննդաբերության ընթացքում իր մասնագիտական պարտականությունները կատարել է ոչ պատշաճ՝ դրանց նկատմամբ դրսեւորելով անփույթ վերաբերմունք:

Վ. Ասիլբեկյանին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 130 հոդվածի 2-րդ մասով եւ 325 հոդվածի 2-րդ մասով: Իջեւան քաղաքի բնակիչ, 1965թ. ծնված Էդվարդ Ֆրանգուլյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով «Իջեւան բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկաբարձական բաժանմունքի վարիչ, 2017թ. հուլիսի 14-ին կամ 15-ին նախնական համաձայնության գալով բաժանմունքի մանկաբարձ-գինեկոլոգ Վանուհի Ասիլբեկյանի հետ, նրա կողմից կատարված հանցավոր արարքը թաքցնելու նպատակով պատասխանատվությունից ազատող, պաշտոնական այլ փաստաթուղթ հանդիսացող՝ Էլինա Սաղոյանի անվամբ լրացված թիվ 1554 ծննդաբերության պատմության մեջ ակնհայտ կեղծ գրառումներ են կատարել:

Է. Ֆրանգուլյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 325 հոդվածի 2-րդ մասով: 2017թ. հուլիսի 15-ն Իջեւանի բժշկական կենտրոնում Էլինա Սաղոյանի նորածին երեխան մահացել է: Վ. Ասիլբեկյանի եւ Է. Ֆրանգուլյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը: Դատաքննության ընթացքում Վ. Ասիլբեկյանը եւ Է. Ֆրանգուլյանն իրենց մեղավոր չեն ճանաչել: 2020թ. հոկտեմբերի 13-ն Իջեւան քաղաքում Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Ռաֆիկ Մելքոնյանը վճռել է Վ. Ասիլբեկյանին եւ Է. Ֆրանգուլյանին իրենց առաջադրված մեղադրանքներում ճանաչել անմեղ եւ արդարացնել: Տավուշի մարզի դատախազության դատախազ Է. Հարությունյանը այդ դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել: Քրեական գործերով վերաքննիչ դատարանը 2021թ. հունիսի 17-ին որոշել է վերաքննիչ բողոքը բավարարել մասնակիորեն, Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավճիռը բեկանել եւ գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության: 2023թ. փետվարի 7-ին Բերդ քաղաքում դատավոր Ջոյա Զաքինյանը վճռել է Վ. Ասիլբեկյանին եւ Է. Ֆրանգուլյանին արդարացնել՝ նրանց արարքներում հանցակազմի բացակայության հիմքով: Դատախազությունը սահմանված ժամկետում՝ մեկ ամսում, այդ վճռի դեմ վերաքննիչ բողոք չի ներկայացրել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԴՊՐՈՑ

ՍԱՀՄԱՆՎԵԼ ԵՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի հրամանով՝ սահմանվել են պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները:

Գնահատման չափանիշների ներդրումն իրականացվելու է հետեւյալ ժամանակացույցով՝

1) 2023-2024 ուստարի՝ Տավուշի մարզի դպրոցների բոլոր դասարաններում,

2) 2023-2024 ուստարի՝ ՀՀ բոլոր դպրոցների 2,5,7,10-րդ դասարաններում,

3) 2024-2025 ուստարի՝ ՀՀ բոլոր դպրոցների 3,6,8,11-րդ դասարաններում,

4) 2025-2026 ուստարի՝ ՀՀ բոլոր դպրոցների 1,4,9,12-րդ դասարաններում:

Գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի կարողունակությունների զարգացման աստիճանը՝ ըստ ուսումնական առարկաների չափորոշիչներով եւ ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների ու արժեքների ձեւավորման աստիճանի: Գնահատման գործընթացի հիմքում ընկած են հավաստիության, հուսալիության, օբյեկտիվության, մատչելիության, արդարության եւ թափանցիկության սկզբունքները: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի ուսումառության արդյունքների գնահատումն իրականացվում է նույն սկզբունքներով՝ ապահովելով սովորողի անհատական ուսուցման պլանով նախատեսված խելամիտ հարմարեցումները, մատչելի ձեւաչափերը, անհատական օժանդակ սարքավորումներն ու միջոցները:

Ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման երեք տեսակ՝

1) հայտորոշիչ գնահատում,

2) ձեւավորող գնահատում,

3) ամփոփիչ գնահատում (միավորային եւ բնութագրող):

Հայտորոշիչ գնահատում

Հայտորոշիչ գնահատման նպատակն է բացահայտել սովորողի նախնական գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքն ու արժեքներն ուսումնական գործընթացի որեւէ փուլի՝ ուսումնական տարվա, կիսամյակի, առարկայի, դասընթացի, նոր թեմայի ուսումնասիրման մեկնարկից առաջ: Հայտորոշիչ գնահատման ձեւն ընտրում է ուսուցիչը:

Ձեւավորող գնահատում

Ձեւավորող գնահատումն ուսումնական գործընթացի բաղադրիչ է, որի նպատակն է բացահայտել յուրաքանչյուր սովորողի կամ ամբողջ դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները ուսուցման եւ ուսումնառության գործընթացի բարելավման համար: Ձեւավորող գնահատումն իրականացվում է 1-12-րդ դասարաններում. միավոր չի նշանակվում:

Ամփոփիչ գնահատում

Ամփոփիչ գնահատման նպատակն ուսումնական առարկաների չափորոշիչներով եւ ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան սովորողի ուսումնական ձեռքբերումների գնահատումն է՝ դասի, թեմայի, կիսամյակի, ուսումնական տարվա ավարտին, ինչպես նաեւ կրթական աստիճանի ավարտին ամփոփիչ ատեստավորման միջոցով:

Ամփոփիչ գնահատումն իրականացվում է միավորային կամ բնութագրող գնահատման միջոցով: Ամփոփիչ գնահատման արդյունքների հիման վրա՝ ձեւավորվում է կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատման արդյունքների հիման վրա՝ տարեկան ամփոփիչ գնահատականը:

Հաստատության 1-4-րդ դասարաններում եւ 5-րդ դասարանի առաջին կիսամյակում սովորողի կիսամյակային ամփոփիչ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով: Յուրաքանչյուր սովորողի համար կազմվում է ուսումնական առաջադիմության բնութագիր: Հաստատության 5-րդ դասարանի 2-րդ կիսամյակից մինչեւ 12-րդ դասարանը ներառյալ ամփոփիչ գնահատումն իրականացվում է միավորային գնահատման միջոցով:

Միավորային գնահատում

Միավորային գնահատումը կիրառվում է 5-րդ դասարանի երկրորդ կիսամյակից սկսած: Միավորային գնահատման դեպքում կիրառվում է սովորողների գնահատման 10-միավորային սանդղակ, որտեղ որեւէ նիշ անբավարար գնահատական չէ: Միավորային գնահատման ցանկացած ձեւի կիրառմանը պետք է նախորդեն հայտորոշիչ եւ ձեւավորող գնահատումներ:

ԼՈՒՐԵՐ

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԸ

Արմավիրի մարզպետարանը Ա/Ձ ՔՐԻՍՏԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ-ից մեկ անձի գնման սկզբունքով 438 հազար դրամի կենցաղային ապրանքներ է ձեռք բերել:

ArmLur.am-ը տեղեկացավ, թե Արմավիրի մարզեպատանն այդ գումարով ինչ է ձեռք բերել: Այսպես, ձեռք են բերվել 6 հատ 1000 դրամանոց գոգաթիակ՝ աղբը հավաքելու համար, 50 հատ 600 դրամանոց կահույքի փայլեցման միջոց, 24 հատ մաքրող մածուկներ, 20 հատ լվացքի փոշի:

Այդքանով, սակայն, կենցաղային ապրանքների ձեռք բերման ցանկը չի սպառվում: Արմավիրի մարզպետարանը ձեռք է բերել նաեւ 3 հատ հատակ մաքրելու ձող, 30 հատ զուգարանների մաքրման նյութեր, 72 հատ ախտահանող հեղուկ, 60 հատ օճառ, հեղուկ եւ այլն:

Կրկին մեկ անձից գնման ընթացակարգով մարզպետարանը ԷԼՖՐԻԴԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ-ից 2 ծաղկեպսակ է գնել՝ յուրաքանչյուրը 20 հազար դրամ արժողությամբ:

ԱՄԵՆԱՑԱԾՐ ԻՆԴԵՔՍԸ՝ 2001 Թ.-ԻՑ Ի ՎԵՐ

«ԼՈՒՅՍ» հիմնադրամն ուսումնասիրել է «Հերիթեյջ» հիմնադրամի կողմից հրապարկված «Տնտեսական ազատության ինդեքս-2023» զեկույցը: 1995թ.-ից ի վեր՝ յուրաքանչյուր տարի հրապարակվող այս զեկույցներում գնահատվում է աշխարհի տարբեր երկրներում, այդ թվում՝ Հայաստանում տնտեսական ազատության աստիճանը, ինչպես նաեւ հնարավորություն է ընձեռվում իրականացնելու միջժամանակային եւ միջերկրային համեմատություններ:

Այսպես, 2023թ.-ին Հայաստանի տնտեսական ազատության ինդեքսը շարունակում է նվազել: Հայաստանը 65.1 միավոր տնտեսական ազատության ինդեքսով (ՏԱԻ) (որը նախորդ տարվա ցուցանիշից պակաս է 0.2 միավորով) համաշխարհային վարկանիշային աղյուսակում 50-րդն է, իսկ Եվրոպայի տարածաշրջանում զբաղեցնում է 28-րդ հորիզոնականը: Հայաստանի 2023թ. ՏԱԻ-ն 2001թ.-ից ի վեր ամենացածրն է:

Ինչպես եւ անցյալ տարի, Հայաստանը գտնվում է տնտեսապես «չափավոր ազատ» երկրների խմբում: Ի դեպ, 2020 եւ 2021թթ.-ին Հայաստանը ներառված էր տնտեսապես «հիմնականում ազատ» երկրների խմբում:

Զեկույցում նշվում է, որ «Հայաստանում տնտեսական ազատության հիմքերը ամուր չեն պահպանվում դատական համակարգի կողմից, իսկ կոռուպցիան նվազեցնում է տնտեսական զարգացման հնարավորությունները՝ շարունակելով մնալ լուրջ հիմնախնդիր»:

ՏԱԻ-ով Հայաստանը ԵԱՏՄ անդամ երկրների թվում 2023թ.-ին առաջատարն է:

Հայաստանը հարեւան չորս երկրներից շարունակում է զիջել միայն Վրաստանին:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

● Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 35 ՃՏՊ. 3 մարդ զոհվել է, 83-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ»-Ի ԱՐՇԱՎԸ

«Կոնվերս բանկ»-ը հայտարարում է կանանց միամսյակին նվիրված արշավի մեկնարկի մասին, որի ամենահաջողակ 14 մասնակիցները կստանան արժեքավոր նվերներ՝ Միջերկրական ծովով ճամփորդության ուղեգիր՝երկու անձի համար, 2 Apple watches Ultra Series, 3 Fujifilm Instax Mini 11, 3 Xiaomi power bank, 5 Xiaomi LED makeup mirror:

Արշավին կարող են մասնակցել բանկի մոբայլ հավելվածի օգտատեր, Mastercard Woman'sCard բոլոր քարտապանները՝կատարելով նվազագույնը 30.000 ՀՀ դրամ ընդհանուր գումարի անկանխիկ գնում: Հաշվի են առնվելու նաեւ առցանց գնումները:

Յուրաքանչյուր 30.000 ՀՀ դրամի գործարքի դիմաց կտրվի խաղարկությանը մասնակցելու մեկ կոդ. որքան մեծ լինի գործարքի գումարը, այնքան կմեծանա բանկի ֆեյսբուքյան էջում ուղիղ հեռարձակմամբ կայանալիք խաղարկության ընթացքում հաղթելու հավանականությունը: «Կոնվերս բանկ»-ում նշել են նաեւ, որ Mastecard Woman'sCard բոլոր քարտապանները, որոնք չունեն Converse Mobile, կարող են արշավին մասնակցել՝ներբեռնելով եւ ակտիվացնելով հավելվածը: Mastercard Woman'sCard քարտապան չհանդիսացող Converse Mobile օգտատերերը կարող են այն պատվիրել հավելվածի «+» բաժնում՝ընտրելով «Նոր քարտ», ապա՝ Mastercard Woman'sCard:

Արշավի մանրամասներին կարող եք ծանոթանալ՝զանգահարելով 010-511-211 հեռախոսահամարով:

Բանկը վերահսկվում է ԿԲ կողմից:

ԳՆՈՒՄՆԵՐ՝ «ՕՆԼԱՅՆ ՍՈՒՊԵՐՄԱՐԿԵՏ»-ԻՑ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը 800 հազար դրամի ներկայացուցչական ծառայություններ է կատարել ու պարենային ապրանքներ ձեռք բերել «Օնլայն սուպերմարկետ» ՍՊԸ-ից՝ մեկ անձից կատարվող գնման ընթացակարգով: ArmLur.am-ը տեղեկացավ, թե ինչ է ձեռք բերել նախարարությունն այդ գումարով:

Այսպիսով, ձեռք է բերվել «Ախթամար» եւ «Նաիրի» կոնյակներ, ջուր, տարբեր տեսակի սուրճեր, թեյ, շոկոլադե կոնֆետների հավաքածու, շաքարավազ, հանքային ջուր եւ չրերի հավաքածու: Տեղեկացանք, որ «Նաիրի» կոնյակն արժեցել է 35 հազար 250 դրամով, «Ախթամար» կոնյակը՝ 12450 դրամ: Շոկոլադե կոնֆետների հավաքածուն արժեցել է 5800 դրամ, չրերի հավաքածուն՝5500 դրամ:

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ

ՖԻՆՏԵԽ ՈԼՈՐՏԻ ԵԶԱԿԻ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

«Ակբա» բանկը DigiTec տեխնոլոգիական ցուցահանդեսի այցելուներին տեղափոխում է թվային աշխարհ եւ ներկայացնում ֆինտեխ ոլորտի ինովացիաները: DigiTec-ում «Ակբա» բանկը ներկայացրել է Հայաստանում եզակի Acba MAX բազմաֆունկցիոնալ բանկոմատը, որը նաեւ վճարային տերմինալ է, տարադրամի փոխանակման կետ եւ նույնիսկ հնարավորություն է տալիս մարել այլ բանկերում գործող վարկերը: «Մեր օրերում բիզնեսի բոլոր ուղղությունները զարգանում են տեխնոլոգիական ուղղությամբ էֆեկտիվությունն ավելի մեծացնելու նպատակով: Մենք, իհարկե, խոսք ունենք ասելու բիզնեսում, եւ դժվար է պատկերացնել զարգացումն առանց տեխնոլոգիաների: Բանկում մենք լայնորեն կիրառում ենք ռոբոտներ, որոնք իրենց էֆեկտիվությամբ մի քանի անգամ գերազանցում են մարդուն, չեն սխալվում երբեք, աշխատում են 24 ժամ: Սա մեզ հնարավորություն է տալիս, որ մեր աշխատակիցները զբաղվեն ստեղծագործ աշխատանքով»,- նշել է «Ակբա» բանկի բիզնես գործառույթների համակարգման գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Արսեն Մելիքոնյանը:

«Acba MAX պլատֆորմը հեղափոխական է բանկային տերմինալների շուկայում, քանի որ մեզ հաջողվել է վճարային համակարգն ինտեգրել բանկոմատում եւ մեկ սարքի վրա ստանալ բազմաֆունկցիոնալ համակարգ», -նշում է «Ակբա» բանկի պլատֆորմների եւ տեխնոլոգիաների զարգացման գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Տիգրան Սիմոնյանը՝ հավելելով նաեւ, որ նորարար ու ավելի արագ թվային ծառայություններ մատուցելու նպատակով հաճախորդների կողմից ուղարկվող հարցերը, որոնց արհեստական բանականությամբ աշխատող ռոբոտները չեն կարողանում պատասխանել, տեղում ուղղորդվում են բանկի հեռախոսային կենտրոնի աշխատակիցներին, որոնք պատասխանում են հաճախորդների բոլոր հարցերին: «Acba MAX բազմաֆունկցիոնալ բանկոմատի միջոցով հնարավոր է մարել նաեւ այլ բանկերում գործող վարկեր, հնարավորություն կա կատարելու կոմունալ վճարումներ, ինտերնետի համար վճարումներ, պետական վճարումներ, նաեւ հնարավոր է տարադրամ փոխանակել»,- նշել է «Ակբա» բանկի թվային բիզնեսի վարչության պետ Արթուր Կարճիկյանը:

«Ակբա» բանկի տաղավարում այցելուները հնարավորություն ունեցան ծանոթանալու նաեւ Acba Digital հավելվածի նոր գործիքներին: Հայաստանում Acba Digital-ն առաջինն է, որի միջոցով հնարավոր դարձավ ակտիվացնել Visa Digital քարտատեսակը: «Visa Digital քարտ հնարավոր է պատվիրել Acba Digital-ի միջոցով: Մենք առաջինն ենք շուկայում, որ հաճախորդին հնարավորություն ենք տալիս ընտրել քարտի իր ցանկալի դիզայնը: Ունենք բազմաթիվ այլ հնարավորություններ, թեմատիկ դիզայններ, որը թարմացվում է բանկի կողմից, եւ օգտատերը կարող է ըստ տրամադրության որոշել, թե ինչպիսին պետք է լինի իր քարտի դիզայնը»,- նշել է «Ակբա» բանկի մանրածախ բիզնես պրոդուկտների պլանավորման եւ կառավարման բաժնի ղեկավար Էլիզա Հայրապետյանը:

«Ակբա»-ն ուսումնասիրում է հաճախորդների պահանջները եւ ներկայացնում թվային լուծումներ բոլոր ուղղություններում՝ վարկավորումից մինչեւ հաճախորդների սպասարկում, որոնք հեշտացնում են քաղաքացիների կյանքը:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Ֆլորես» Աճուրդի Տուն» ՍՊԸ-ն (այսուհետ՝Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է «ՀԱՐԱՎԱԿՈՎԱԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ» ՓԲԸ-ին անհատույց օգտագործման իրավունքով պատկանող ներքոնշյալ գույքերի վարձակալության պայմանագիր կնքելու իրավունքի բաց աճուրդ «դասական» եղանակով.

- ք. Երեւան, Էրեբունի, Տիգրան Մեծի պողոտա, 86 հասցեում գտնվող Երեւան կայարանի մեկնակայանի շենքի 1-ին հարկում գտնվող 327,84 ք.մ. տարածք: Մեկ ամսվա վարձավճարի մեկնարկային գինը ՝ 1695588 ՀՀ դրամ: Տարածքը կարող է օգտագործվել միայն որպես հասարակական սննդի օբյեկտ, առեւտրի սրահ, գրասենյակային տարածք կամ պատվիրատուի հետ փոխհամաձայնեցված այլ նպատակով:

- ք. Երեւան, Էրեբունի, Տիգրան Մեծի պողոտա, 86 հասցեում գտնվող Երեւան կայարանի մեկնակայանի շենքի 1-ին հարկում գտնվող 261 ք.մ. տարածք: Մեկ ամսվա վարձավճարի մեկնարկային գինը՝593444 ՀՀ դրամ: Տարածքը կարող է օգտագործվել միայն որպես գրասենյակային տարածք, պահեստ կամ պատվիրատուի հետ փոխհամաձայնեցված այլ նպատակով:

- Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք., Կայարանամերձ հրապարակ, թիվ 1 հասցեում գտնվող Գյումրի կայարանի մեկնակայանի շենքի 2-րդ հարկում գտնվող 418 ք.մ. տարածք: Մեկ ամսվա վարձավճարի մեկնարկային գինը ՝ 694298 ՀՀ դրամ: Տարածքը կարող է օգտագործվել միայն որպես հյուրանոց կամ պատվիրատուի հետ փոխհամաձայնեցված այլ նպատակով:

Վարձակալության պայմանագրի ժամկետը՝ առնվազն մեկ տարի:

Պայմանագիրը կնքվելու է աճուրդի արձանագրությունը կնքելուց հետո մեկ ամսվա ընթացքում:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 30.03.2023թ.-ին, ժ.12:00-ին, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝30.12.2023թ. ներառյալ: Յուրաքանչյուր լոտի աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է 200000 ՀՀ դրամ, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Ֆլորես» ԱՏ ՍՊԸ-ի դրամարկղում՝աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 1570005285290100 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ համապատասխան գույքի աճուրդի ավարտին նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 52-61-85 հեռախոսահամարով կամ այցելել www.akson.am կայքը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՆՃԱՐԵՂ ՁԱՎԱԿԸ՝ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

Մի խումբ գրողներ, արվեստի տարբեր ոլորտների ներկայացուցիչներ, դպրոցականներ, ընթերցասերներ եւ պարզապես հեսաfրfրասերներ Եղիշե Չարենցի ծննդյան օրը՝ մարտի 13-ին, ծաղիկներ խոնարհեցին մեծ գրողի հուշարձանի մոտ:

Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանը կարեւորեց հատկապես աշակերտների մասնակցությունը՝ շեշտելով, որ հենց նրանք են ապագան, եւ կարդալով, զարգանալով՝ նրանք ընթերցանության հանդեպ սերը կփոխանցեն հաջորդ սերունդներին:

«2022-ին Պոեզիայի համաշխարհային օրվան կազմակերպված միջոցառումները նվիրել էինք Չարենցին: Ներկա էին ՀՀ-ում տարբեր երկրների դեսպանատների ներկայացուցիչներ, որոնք իրենց լեզուներով մատուցեցին Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը: Հետո եւ՝ հուշարձանի մոտ, եւ՝ հեղինակի տուն-թանգարանում տարբեր միջոցառումներ անցկացրինք եւ տարվա ընթացքում հրատարակեցինք Չարենցին նվիրված «Ես եմ հիմա□» ժողովածուն»,- ասաց Միլիտոնյանն ու հավելեց, որ 2022-ին Չարենցին նվիրված միջոցառումներ են կազմակերպել ոչ միայն Երեւանում, այլեւ գրողների Ծաղկաձորի ստեղծագործական տանը, որոնց մասնակցել են բազմաթիվ դպրոցականներ:

Ըստ Միլիտոնյանի՝ Չարենցը եւ՝ պոեզիայով, եւ՝ արձակով աննման է: «Նրա «Երկիր Նաիրի» վեպը եւ այլ գործեր, նրա թագմանությունները, հոդվածներն աննման են: Նա հսկայական գործ է արել, որը պետք է գիտակցեն թե՛ պատանիները, թե՛ ավագ սերնդի ներկայացուցիչները: Գրողը չպետք է փոքր շրջանակի, այլ լայն հասարակության համար լինի, սակայն պարտադիր չէ, որ ընկալեն նրա բոլոր ստեղծագործությունները: «Ես իմ անուշ Հայաստանի»-ն բոլորն են սիրում, բայց Չարենցն ունի բանաստեղծություններ ու պոեմներ, որ պարտադիր չէ՝ բոլորն ընկալեն: Դրա համար բարձր պոետական ճաշակ է հարկավոր: Նրա հրապարակախոսությունը, ազգային մոտեցումներն արդիական են մինչ օրս»,-եզրափակեց միության նախագահը:

Եղիշե Չարենցի տուն-թանգարանի տնօրեն Ժաննա Մանուկյանը տեղեկացրեց, որ մարտի 13-ի երեկոյան երկու ցուցադրություն կբացեն: «Ցուցադրություններից մեկը կրում է «Նվեր հոբելյանին. Չարենց-125» խորագիրը, իսկ մյուսը՝ «Այստեղ աշխատում է Չարենցը» հոլոգրաֆիկ ցուցադրությունը: Մարինե Մանասյանի կատարմամբ կհնչեն հեղինակի խոսքերով երգեր: Բավականին հետաքրքիր ու մտերմիկ միջավայր կլինի»,-նշեց նա:Մանուկյանը հիշեցրեց, որ 2022-ին մեծ գրողի 125-ամյակի առթիվ Եղիշե Չարենցի տուն-թանգարանի, «Անտարես» հրատարակչության եւ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի միջեւ ստորագրվել է հուշագիր համատեղ ջանքերով գրողի ստեղծագործությունների նոր ակադեմիական հրատարակությունը («Երկերի ժողովածու» 13 հատորով) լույս ընծայելու նպատակով:

«Առաջին հատորի աշխատանքներն արդեն ավարտված են: Հույս ունեմ՝ առաջիկայում կլինի գրքի շնորհանդեսը»,-շեշտեց նա: Եղիշե Չարենցի թոռնուհի Գոհար Չարենցի խոսքով՝ Չարենցն իր պապիկն է, իր արյունն է, բայց նա նաեւ հայ ժողովրդի հանճարեղ զավակն է: «Նախորդ տարի բազմաթիվ միջոցառումներ կազմակերպվեցին, եւ ժողովուրդը նրա կողքին կանգնեց, ինչպես Չարենցն էր ժամանակին ժողովրդի կողքին: Չնայած Չարենցն իր կյանքի վերջին տարիներին միայնակ էր, նրան ոչ ոք չէր այցելում, բայց այսօր նրա կողքին է ամբողջ հայ ժողովուրդը: Այդպես էլ պետք է լինի դարերով»,-ընդգծեց Գոհար Չարենցն ու մեջբերեց մեծ գրողի խոսքերը. «Ես եկել եմ դարերից ու գնում եմ հաղթական դեպի դարերը նորից՝ դեպի վառվող ապագան»:

Միջոցառումը կազմակերպել էին Հայաստանի գրողների միությունն ու Չարենցի տուն-թանգարանը:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ՀԱՄՈ ԲԵԿՆԱԶԱՐՅԱՆԻ ՖԻԼՄԵՐՆ ԱՆՓՈԽԱՐԻՆԵԼԻ ԵՆ

Ֆրանսիական Nouvel Hay Magazine պարբերականն իր «Երեք վերականգնված ֆիլմ Փարիզում՝ մարտի 10-ին եւ 11-ին» հոդվածում անդրադարձել է ֆրանսիական Սինեմատեկի «Աշխարհի ողջ հիշողությունը» միջազգային կինոփառատոնի ընթացքում ցուցադրվելիք Համո Բեկնազարյանի երեք ֆիլմերին եւ հրապարակել է ցուցադրությունների ծրագիրը:

Պարբերականի անդրադարձը մեջբերել է Հայաստանի ազգային կինոկենտրոնը:

Հոդվածում ասվում է. «Համո Բեկնազարյանի վերականգնված երեք ֆիլմերը, որոնք կցուցադրվեն «Աշխարհի ողջ հիշողությունը» կինոփառատոնի շրջանակում, անփոխարինելի ժառանգություն են»:

Հոդվածում ընդգծվում է, որ Համո Բեկնազարյանը 1920-1950 թվականների սովետական կինոյի ականավոր կինոգործիչ էր, հայ կինոյի հիմնադիր, խորհրդային կինոյի պատմության մեջ օրինակը չունեցող 30 լիամետրաժ եւ վավերագրական ֆիլմերի հեղինակ: Ըստ պարբերականի՝ Բեկնազարյանը կինոյի՝ որպես մշակութային էմանսիպացիայի գործիքի ջերմեռանդ պաշտպանն էր ու կողմնակիցը:

Ֆրանսիական Սինեմատեկի հովանու ներքո անցկացվող «Աշխարհի ողջ հիշողությունը» միջազգային կինոփառատոնի շրջանակում մարտի 10-11-ին կցուցադրվեն Համո Բեկնազարյանի «Տունը՝ հրաբխի վրա» կինոնկարը՝ նկարահանված 1928 թվականին, «Երկիր Նաիրի» ֆիլմը, որը նկարահանվել է 1930 թվականին, եւ «Դուստրը», որը ռեժիսորը ստեղծել է 1942-ին:

ԼՈՒՐԵՐ

ՏՊԱՎՈՐԻՉ ԴՐՎԱԳՆԵՐԸ

«Օսկար 2023» մրցանակաբաշխությանը հաջորդել է Vanity Fair-ի երեկույթը, որին ներկա են եղել ամենաքննարկվող ու սկանդալային աստղերից մի քանիսը: Երեկույթի ընթացքում նրանք, իհարկե, իրենց ընտրած զգեստներով ու գլամուրային պահվածքով գրավել են համաշխարհային մեդիայի ուշադրությունը:

Բնականաբար, ոչ ոքի աչքից չի վրիպել մոդել Էմիլի Ռատակովսկու գերթափանցիկ զգեստը, որը գրեթե ցուցադրում էր գեղեցկուհու կուրծքը:

Պապարացիների աչքից չեն վրիպել նաեւ լավագույն ընկերուհիներ Քենդալ Ջեններն ու Ջիջի Հադիդը, որոնք տեսախցիկների առջեւ ցուցադրել են իրենց ջերմ համբույրը:

Շքեղ ու տպավորիչ հագուստով աչքի է ընկել նաեւ Քենդալի կրտսեր քույրը՝ Քայլի Ջենները, որը գլամուրային կեցվածք է ընդունել տեսախցիկների առջեւ: Ի տարբերություն նրանց՝ Ջասթին Բիբերը, կարծես, ավելի պասիվ է եղել: Երգիչը նախընտրել է հարմար տեղավորվել բազմոցին ու քիչ հայտնվել տեսախցիկների դիմաց:

ՌԵԿՈՐԴ Է ՍԱՀՄԱՆԵԼ

Իսպանիայի առաջնության 25-րդ տուրում «Բարսելոնան» 1:0 հաշվով հաղթել է Բիլբաոյի «Աթլետիկին»: Այս հաշվի շնորհիվ իսպանացի Չավիի գլխավորած թիմը սահմանել է Լա Լիգայի ռեկորդ. 25 խաղում բաց է թողել ընդամենը 8 գոլ:

Նախորդ ռեկորդը 25 տուրից հետո բաց թողած 10 գոլն էր. 1991-ին սահմանել էր «Աթլետիկոն», 1994-ին կրկնել էր «Դեպորտիվոն»:

«Բարսելոնան» 65 միավորով գլխավորում է մրցաշարային աղյուսակը եւ երկրորդ տեղում գտնվող Մադրիդի «Ռեալից» առաջ է 9 միավորով:

ԴՈՒՐՍ Է ՄՆԱՑԵԼ

Հայկական արմատներով ռուս թենիսիստ Կարեն Խաչանովը դուրս է մնացել «Ինդիան Ուելս»-ից:

«Ինդիան Ուելս»-ի տղամարդկանց մենախաղի երրորդ շրջանում Կարեն Խաչանովը մրցեց իսպանացի թենիսիստ Ալեխանդրո Դավիդովիչ-Ֆոկինայի հետ: 2 ժամ 17 րոպե ձգված մրցախաղում Խաչանովը պարտվեց 3-6, 6-1, 4-6 հաշվով:

Կարեն Խաչանովը պրոֆեսիոնալ թենիսիստների ասոցիացիայի (ATP) վարկանիշային աղյուսակում 13-րդն է: Նա 4 անգամ հաղթել է միջազգային ֆեդերացիայի հովանու ներքո անցկացվող մրցաշարում: Նա Տոկիոյի 32-րդ ամառային Օլիմպիական խաղերի արծաթե մեդալակիր է: Հայկական արմատներով ռուսաստանցի թենիսիստի լավագույն արդյունքը եղել է 2019 թվականին, երբ նա հասել է Rolan-Garros-ի քառորդ եզրափակիչ եւ 2021 թվականին՝ դարձյալ քառորդ եզրափակիչ Ուիմբլդոնում, իսկ 2022-ին նա հասավ US Open-ի կիսաեզրափակիչ: 2023 թվականին էլ Խաչանովը դուրս մնաց AusOpen-ի կիսաեզրափակչից:

● *Մարտի 15-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա «Էվոլյուցիա» սթենդափը: Տոմսերի արժեքը՝ 3000-6000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:30-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Եթե դիմորդները մրցութային հավասար միավորներ են հավաքում, ապա ո՞ւմ է առավելություն տրվում:

Մարգար Պողոսյան (58 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մրցութային հավասար միավորների դեպքում, ըստ հերթականության, առավելություն է տրվում՝

1) բոլոր տարիների մեդալակիր դիմորդներին,

2) արվեստի գծով միջազգային եւ հանրապետական մրցույթների հաղթողներին,

3) դպրոցականների հանրապետական առարկայական օլիմպիադաների առաջին կարգի դիպլոմ ստացած դիմորդներին,

4) Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված, Հայաստանի Հանրապետության բուհերի առկա ուսուցմամբ տվյալ ուսումնական տարվա մասնագիտությունների եւ ընդունելության քննությունների ցանկում բուհի կողմից նշված առաջին մրցութային քննությունից առավել բարձր միավոր ստացած դիմորդներին,

5) դպրոցի պետական ավարտական քննություններից առավելագույն միջին գնահատական ունեցող դիմորդներին,

6) տվյալ մասնագիտությանը համապատասխան միջին մասնագիտական կրթություն ստացած դիմորդներին:

ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տեղեկացնենք, որ փաստաթղթերը ՀՀ ԿԳՆ ներկայացվում են դիմորդի կողմից անձամբ, իսկ եթե դիմողն օտարերկրացի է, ապա տվյալ պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների միջոցով:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՎՃԱՐՆԵՐ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ եթե ֆիզիկական անձն իրեն պատկանող հասարակական նշանակության տարածքը տրամադրել է վարձակալության, ապա ԱԱՀ-ի վճարման պարտավորություն նա ունի՞, թե՞ ոչ:

Հայկ Կարապետյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 17-րդ կետի՝ անհատ ձեռնարկատեր եւ (կամ) նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից անշարժ գույքի վարձակալության գործարքները ԱԱՀ-ով չեն հարկվում (հարկման օբյեկտ չեն համարվում):

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ ԱԱՀ վճարող է համարվում որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող գրանցված կամ ձեռնարկատիրական գործունեություն վարելու իրավունք ունեցող իրավաբանական անձը: ԱԱՀ-ի դրույքաչափը սահմանվում է 20 տոկոս՝ ապրանքների ու ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է «Զվարթնոց» օդանավակայանում

«Զվարթնոց» միջազգային օդանավակայանում օրերս տեղի ունեցավ «Հայկական ավիաուղիներ» ավիաընկերության բացման պաշտոնական արարողությունը, որի շրջանակներում կայացավ նաեւ ավիաընկերության առաջին չվերթը դեպի Մոսկվա:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **13.03.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: